ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 221 – Ա 28 ապրիլի 2021 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի փոփոխության պատճառով «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սևակ Դվոյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Յուրա Մուշեղյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Բուրմունք Հովհաննիսյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ
Աշոտ Կարապետյան	-հանձնող
Գարիկ Սողոմոնյան	-ընդունող
Լյուբա Քոչարյան	-հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Սևակ Դվոյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

28.04.2021

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ